# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

N 400-Ա

30 հուլիսի 2024 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 471-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների /տնօրենների/ ընտրության /նշանակման/ մրցույթային հանձնաժողովների անդամության թեկնածուների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 259–Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 471-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

30.07.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հուլիսի 30 - ի
N 400-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2022 թվականի օգոստոսի 31- ի
N 471-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ /ՏՆՕՐԵՆՆԵՐԻ/ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ /ՆՇԱՆԱԿՄԱՆ/ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

| | |
|---|---|
| Սարգսյան Կարեն | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետ |
| Զարոյան Վահան | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ |
| Սահակյան Սասուն | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ |
| Վարդանյան Լուսինե | - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ |
| Հարությունյան Վանիկ | - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ |
| Զաքյան Կարեն | - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |

| | |
|---|---|
| Պետրոսյան Մարտին | - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ |
| Գյարզոյան Մարինե | - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ |
| Մուշեղյան Յուրա | - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ |
| Հակոբյան Տիգրան | - մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ |
| Ղուրշուդյան Մարատ | - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ |
| Մանուկյան Սիմոն | - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ |
| Սարգսյան Նելսոն | - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ |
| Խաչատրյան Մերի | - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ»: |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

30.07.2024

X

ՅՈՒՐԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Подписано: MUSHEGHYAN YURA 3005700062

Յ. ՄՈՒՇԵՂՅԱՆ